

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлист. Редакция «Мшакъ».
կամ. Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ 1886 ԹԻՒՆ

Հրատարակւում է Թիֆլիսում, շաբաթը երեք անգամ, նոյն դիւրքով և նոյն պարագրաֆով: Մեր
տպանում ենք սեփական ՀԵՌԱԳՐԱՆԵՐ:

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, 11 կամ 10 ամսականը 9 ռուբլ, վեց ամսականը 6 ռուբլ:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է խմբագրատանը և պ. ՇԱՎԵՐԴՅԱՆԻ պալլիթիոնում: ԽՄԲԱԳՐԱՆ
ՏՈՒՆԸ գտնւում է Բարձրակի և Բաղրիւնի փողոցների անկիւնում, թափառելի տանը, № 12 բնա-
կարանում: Ուղղակի մուտքը Բաղրիւնի փողոցից է, իսկ մէջնային մուտքը Ուղղակի փողոցից:

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆՈՒՄ «ՄՇԱԿ» գրվելով կարելի է վճարել 25 ֆրանկանոց թղթագրամով:
Թիֆլիսում «ՄՇԱԿ» համարները հատուկ ծախվում են 7 կոպեկով պ. ՇԱՎԵՐԴՅԱՆԻ պալլի-
թիոնում, պ. ՏԵՐ-ՅՈՎԱԿԵԱՆԻ ծխախոտի մագազինում (Կովկաս հիւրանոցի տակ) և պ. ԱԼԻՍԵ-
ՆՕՎԻ ծխախոտի մագազինում (Վորոնցովի արձանի դիմաց):

Յայտարարութիւնները, ամեն լեզուներով, ընդունւում են խմբագրատանը և պ. ՇԱՎԵՐԴՅԱՆԻ պալլի-
թիոնում: Յայտարարութիւնների խրաքանչիւր բառին վճարվում է 2 կոպեկ:
ԽՄԲԱԳՐԱՆՏՈՒՆԸ, բաց է ամեն օր, առաւօտեան 10 ժամից մինչև 2 ժամ կեսօրից յետոյ,
բացի կիրակի օրերից:

Կայսերական օրից քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է գիրք հետեւել հաս-
ցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Հասցեն փոխելու ժամանակ պէտք է ուղարկել խմբագրութեանը 28 կոպեկ կամ 4 հաք 7 կո-
պեկանոց փոստային մարկա:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Армянская газета

«М Ш А К Ъ»

Принимаетъ объявленія на армянскомъ, русскомъ и иностранныхъ языкахъ.
Плата за объявленія: 2 копейки со слова. Съ объявленій печатаемыхъ
не менѣе десяти разъ, дѣлается скидка на половину.
Адресъ: ТИФЛИСЪ, редакция газ. „Мшакъ“.

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Գրեղական կրեղիտ բացակայութիւն.—Ներ-
քին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ խմբագրին. Ներքին
չուրի.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Աստուծո-
գործ. Նամակ Թիֆլիսից. Աստուծո-
գործ. ՆԱՆԻ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳՐԱՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.—ՏԵՂԵԿԱՅՈՑՈՑ:

ԳԻՒՂԱԿԱՆ ԿՐԵՂԻՏԻ ԲԱՅԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Հայը կարծես բացի վաճառականութիւ-
նից ուրիշ ոչ մի գործնական պարագրաֆ
չէ ուզում ծանաչել: Չը նայելով անտեսա-
կան ձգնաժամի, հապար և մի անաշտու-
թիւնների, որ կրել է վերջին ժամանակ
մեր վաճառականութիւնը, հայերը դար-
ձեալ չեն կամենում ուշադրութիւն դարձ-
նել երկրի հարստութեան ուրիշ աղբիւր-
ների վրա, երկրի բնական հարստութիւն-
ների մշակութեան վրա:

Հայերի արդիւնագործական գործունեու-
թիւնը ամբողջապէս ամփոփւում է միմյան
քաղաքներում, իսկ զիւղը իր արդիւնաբե-
րութեամբ մնում է անխնամ, գիւղական
կիսանքը, գիւղական անտեսական հարստու-
թիւնները հայից անտես են առնւում:

Կրեղիտը, անուրանալի է, որ մի մեծ օ-
ժանդակիչ ոյժ է ամեն տեսակ արդիւնա-
գործութեան, բայց մինչև այժմ հայերը
խմայն իրագործել կրեղիտային հիմնա-
րութիւններ միմյան քաղաքներում, ուրեմն
օգտւում են այդ կրեղիտից միմյան իրանց
առևտրական գործունեութեան օժանդակե-
լու համար:

Թիֆլիս քաղաքը ունի մի քանի կրեղի-
տային հաստատութիւններ, որոնց նպատա-

կըն է կրեղիտ տալ գլխաւորապէս առև-
տրական դասակարգին, Բագուի մէջ կան
նոյնպէս կրեղիտային հիմնարկութիւններ,
Բաթումի մէջ մտածում են նոյնպէս բանկ
հիմնել, նոյն դիտարկութիւն ունեն և
Գանձակում:

Իսկ զիւղը մնում է զուրկ որ և է կրեղի-
տային հիմնարկութիւններից:

Գեո. Մշակի՝ հրատարակման առաջին
տարուց, 1872 թվից սկսած մենք մի շարք
յօդուածներով մեր կարծիքն էինք յայտ-
նել գիւղական փոխաւորութեան
հիմնարկութեան անհրաժեշտութեան մա-
սին, նոյն տարվայ համարներում ապագը-
րելով և այդ տեսակ բանկերի օրինակելի
կանօնադրութիւնը:

Բայց ահա տաան և չորս տարի է անցել
այն ժամանակից,—և դարձեալ ոչինչ չը
կատարվեցաւ այդ ուղղութեամբ մեր ըն-
կած գիւղական արդիւնաբերութեանը օ-
ժանդակելու համար: Իսկ զրուծիւնը այդ
տաան և չորս տարվայ ընթացքում նոյնն է
մնացել: Ինչպէս 1872 և 1873 թվին, այն-
պէս էլ այսօր, 1886 թվին, մենք անընդ-
հատ նոյն գտնադասներ ենք լսում և կար-
գում մեզ ուղարկվող թղթակցութիւնների
մէջ: Ահա այդ գտնադասները:

Մեր գիւղացին վարելու ու ցանելու ժա-
մանակ, զեռ սպասելով իր բերքի աշոգվե-
լուն, առձեռն դրամի է կարօտ: Հատ ան-
գամ նոյն իսկ ցանքի համար է նրան դրամ
հարկաւոր,—և ահա նա ստիպված է զի-
մել գիւղական որ և է վաշխառուին, որից
մի յայտնի գումար է վերցնում ահագին
տոկոսներով, որ շատ անգամ վճարել էլ ան-
կարող է լինում և ստրկանում է վաշ-

խառուի ձեռքում, դառնում է ստրուկ իր
սեփական պարտքի:

Գիւղական կրեղիտային փոխաւորութեան մի որ
և է հիմնարկութիւն, որ գիւղացուն կրե-
ղիտ մատակարարէր, բայց էժան կրեղիտ,
այսինքն աննշան և հեշտ վճարելի պրօցէստ-
ներով,—անհրաժեշտ է մեր գիւղական ըն-
կած և անտանելի ծանր մասնաւոր կրե-
ղիտի տակ ծնված արդիւնաբերութեան
զրուծիւնը բարձրացնելու համար:

Մենք չենք խօսում այստեղ գիւղական
երկարաժամանակեայ կրեղիտի մասին, որ
հարկաւոր է հողային մեծ կալուածների
համար, բայց խօսում ենք գիւղական մանր,
էժան և կարճ-ժամանակեայ կրեղիտի մա-
սին, որ կարող են մատակարարել աշխա-
տող գիւղացուն փոխաւորութեանը և
գիւղական ընկերութիւնները, կամ գիւղա-
կան փոխաւորութեանը:

Առհասարակ մեզանում կրեղիտը իր նը-
պատակին չէ հասնում իր իսկական գիւղ-
էժանութեամբ, այն դերը չէ կատարում, որ
նա պէտք է կատարի և որ կատարում է քա-
ղաքային երկրիներում: Կրեղիտը մեզա-
նում, թէ հողային, թէ կալուածական, թէ
առևտրական քաղաքային կրեղիտական հիմ-
նարկութիւնների՝ առհասարակ այնքան
թանգ է, վերցվող պրօցէստները այնքան
մեծ են, որ կրեղիտ վերցնողը վերջ է վեր-
ջայ ծնվում է իր փոխաւորութեանը գումարների
պրօցէստների տակ: Կրեղիտը պէտք է նը-
պատէ փոխաւորութեանը և նրա ձեռնարկութիւնների ծաղկմանը և ոչ
թէ մեռցնի նրա ձեռնարկութիւնները:

Իսկ դրա համար կրեղիտը պէտք է
էժան լինի, փոքր տոկոսներով բաւականա-
նայ:

Մեզանում, ընդհանրապէս, կրեղիտը ա-
մենեւին չէ յարմարեցնում իր պահանջած
պրօցէստների չափը մեր երկրի ամեն հիմ-
նարկութիւնից, ամեն ձեռնարկութիւնից
ստացվող աննշան եկամուտին, աննշան ար-
դիւնքին:

Այդ է պատճառը որ մեզանում ոչինչ
չէ աշոգվում և ամեն բան քանդվում է:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Սալիէ, 10 ապրիլի

Ձեր պատուական լրագրի № 36 մէջ Բաթումի
յօդուածագիրը ի միջի այլոց ընթերցողներին տե-
ղեկութիւն է տալիս նաև մի խոտի արմատի մա-
սին, որին կոչում է տաճիկէն բիւն (СОЛОДКО-
ВЫЙ корень, réglisse), և յայտնում է թէ մեծ
քանակութեամբ հաւաքում են այդ խոտի արմա-
տից յայն վաճառականները Նիսաւտապոլի նա-
հանգում և որպէս թէ հայ վաճառականներից մի
քանիսի փորձի համեմատ տեսնվել է որ Մարսէյ-
ում մեծ պահանջ կայ դրա մասին:

Այդ խոտի արմատը, որը հայերէն կոչւում է
մատուռա կամ քաղցր-մարախ, գտնվում է
նաև մեր նահանգի Արդուինի շրջանի Սաւե-
տ-Իմերքեւսկի կոչված բաժնում (участок) որ-
տեղ այդ բոլոր կոչվում է տաթլի-բիւն: Կայ
դրանից նաև Արդուինում, ձորոսի գետի եզրին
Թորգոմ գիւղի դիմաց, նմանապէս և այստեղ մեզ
մօտիկ Արդանուկի շրջանում, որտեղ կոչում են
միւսնապալի:

Այստեղ Դաւիթի ժողովաւորը անձամբ չէ
դրան. գործածում են իրեն դեղ հազի և կրծքա-
ցաւի դէմ: Եւ, ինչպէս հաւատացնում են, միշտ
օգնում է: Եւ այնպէս են պարզ ջրով և թէյի
պէս խմում են առանց շաքարի, որովհետև բնա-
կան քաղցր համ ունի, խմելուն քրտինք է յաջոր-
դում և մաղձերը կակղանում են: Արմատի միջի
գոյնը բաց դեղին է, իսկ ջուրը լինում է դեղ-
նագոյն: Հոտ չունի, բայց քաղցրութիւնը բաւա-
կան ուժեղ է:

Յանկալի էր որ պ. յօդուածագիրը տեղեկաց-
րած լինէր նաև թէ ինչ գիւղերում է ծախվում
այդ արմատը, այն նպատակով որ դուք այս
կողմերի խեղճ ժողովրդին էլ մի օր և է օգուտ
ծագէր դրանից:

Թ. Գալիէնան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հիւսիսային գործակալութիւնը հեռագրում է
մեզ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ, ապրիլի 18-ից, որ հրատա-
րակված են կանաներ անտառային կալուածների
գնահատութեան մասին և այն անտառների վրա
հսկողութեան մասին, որոնք դրա են գրվում պե-
տական սպիտակ կալուածական բանկում:

«Новое Обозрѣніе» լրագիրը լսել է, որ Թիֆ-
լիսի Առևտրական բանկի ակցիոներների ժողո-
վում, որ այս օրերս կայացաւ, բանկի խոր-
հուրդը առաջարկեց անցնել տարվայ հաշիւն դի-
վիդէն գնէր չը տալ ակցիոներներին, քանի որ
այդ գիւղացիների ամբողջ գումարը անցնում է
100 հազար ռուբլու գումարից, իսկ բանկը, ինչ-
պէս երևում է, վճարներ է կրել իրան նշանաւոր
գումարներ տարած մնացած Միլլիոնիկ եղբայրների
գործերի բարդվելու պատճառով:

Մեղ գրում են ՆՈՐ-ՆԱՍԻՉԵՆԻՑԻՑ հետեւեալը:
«Այստեղ տպագրութեան համար պատրաստ է և մի
ամից յետոյ անպատճառ կը տպագրվի «Армянская
позыя въ лицѣ Рафаила Паткаванна» վերնագը-
րով ռուսերէն բրօշուրը: Այդ գրքի մէջ, բացի
մեր բանաստեղծի գրութեանից, ընծադատութիւ-
նից, ամերիկացի կը լինեն նրա ամենազգաւոր
տաղանթները ռուսերէն, արձակ ոճով (պրօզա-
յով) թարգմանված»:

«Новое Обозрѣніе» լրագիրը լսել է, որ Թիֆ-
լիսում յայտնվել է ձիերի սիրելիական աւելած
կենդանիների ժանտաւախտը, որից սատկել են
արդէն մեր քաղաքի ձիաբաշ կրկնուղու (կօն-
կայի) մի քանի ձիեր: Ասում են որ ձիաբաշ եր-
կաթուղու վարչութիւնը միջոցներ է գործ դնում
այդ տարախտիկի ակտի տարածմանը առաջն
առնելու համար:

Ուրբաթ օր, ապրիլի 18-ին, պէտք է տեղի ու-
նենաւ ԹԻՖԼԻՍԻ թատրոնում պ. Չէլիի և օր.
Ալիս Բարբիէ երկուսը և վերջին կօնցէրտը: Հա-
տարակութիւնը, ինչպէս երևում է, շատ բազմա-
թիւ կը լինէր թատրոնում, և ասում են որ գրե-
թէ բոլոր տեղերը բռնված էին: Բայց նոյն իսկ
այն րօպէին, ժամը 8-ին երեկոյան, երբ հասա-
րակութիւնը, որը կառուցվել էր օրով, չէր
մօտենում էին թատրոնի մուտքին,—յանկարծ լուր
տարածվեցաւ թէ օրիորդ Ալիս Բարբիէ անակնկալ
կերպով տկարանալով, կօնցէրտը յետ է գցվում:
Նոյն կօնցէրտը նշանակվեցաւ երկուշաբթի օր և
կայացաւ էլ այդ օրը, այսինքն երէկ, ապրիլի
21-ին, և կրկին մեծ աշոգութիւն ունեցաւ:

Հիւսիսային գործակալութեան միջնորդու-
թեամբ ստացանք հետեւեալ հեռագիրը ՊԵՏԵՐ-
ԲՈՒՐԳԻՑ, ապրիլի 18-ից: Վնասող հրամանագը-
րել է, որ գիւղական ընտրողական ժողովներ
պէտք է բացվեն հաշտարար դատարանների ձեռ-
քով, իսկ սրանց բացակայութեամբ՝ հաշտարար
միջնորդների ձեռքով, որոնք և առաջարկում են

ընտրողներին նշանակել իրանց միջից նախագահ: Հաջորդաբար դատաւոր կամ միջնորդը հաստատում է նախագահին և այնուհետև վճռում է ըստ իր տարածաշրջանի ընտրութեան, որոնք կարող են ծագել ձայնակրերի ընտրութեան ժամանակ: Սկսած յայտնում է նմանապէս, որ քաղաքային դատարանը իրաւունք չունի որոշումներ անել թէ քաղաքային վարչութեան մէջ ծառայողներին, և թէ քաղաքին որ և է օգտակար ծառայութիւն մատուցած անձինքներին պարգևներ չնորհելու մասին կառավարութեան առաջ միջնորդելու:

«Արձագանք» չաքաթաթիւնը գրում են ՄՍՍԿ-ՎԱՅԻՅ, որ Մոսկովայի կայսերական Համալսարանի խորհուրդը մեր հռչակաւոր հայագէտ պ. Մըկրտիչ Էմինին այս օրերս համալսարանի պատուաւոր անդամ նշանակեց, նրա 50 ամեայ գործունէութեան համար ուսումնական ասպարէզում: Շարաթաթիւնը թղթակիցն աւելացնում է, որ պ. Էմին յայտնի է նոյնպէս իր օգտակար գործունէութեամբ մանկավարժական ասպարէզում: Նրան նա տեսուէչ էր լազարեան ձեռնարանում, որտեղից 60-որդ թակաւններում տեղափոխեցաւ Վլադիմիր քաղաքը, իբրեւ գիրկետոր այնտեղի գիմնապիտայ, այնուհետև հրաւիրեցաւ Մոսկովա, որ կառավարութիւնը յանձնեց նրան կազմակերպել և բանալ Մոսկովայի հիմնադրող գիմնապիտայ, որի գիրկետոր նշանակեց նորան և այդ պաշտօնում նա մնաց մինչև 70-որդ թակաւնների վերջը: Մի և նոյն ժամանակ պ. Էմին շարունակում էր լազարեան ձեռնարանի մասնագիտական դասարաններում աւանդել հայոց լեզուն և գրականութիւնը: Միայն 1883 թին պ. Էմին հրաժարեցաւ ուսուցչական պաշտօնից և նորից իրան անդրդուլին նուիրեց գիտական-գրական դեղձմունքներին: «Արձագանքներ» հաղորդում են, որ բացի թիֆլիսից ուղարկած մի քանի հեռագիրներէ Էմինի 50-ամեայ յօրեւանի առթիւ, ասորիւ ի 17-ին կատարված այդ օտոնախմբութեան աւելի չորսհարաւական բազմաթիւ նամակներ և հեռագիրներ են ստացվել լազարեան ձեռնարանում, թէ Ռուսաստանի դաւադան կողմից, թէ նոյն իսկ Գերմանիայից, իտալիայից, Ֆրանսիայից, Հոլանդիայից և Թուրքիայից:

Մենք ստացանք ուսերէն լեզուով տպւած յայտարարութիւն, որից երևում է թէ ԲԱՌՈՒՄԻ մէջ մի պարտն, Լորի աղգանտնում, դիտարկութիւն ունի հրատարակել մի ուսերէն թերթ «Листо́къ Объавле́ній» անունով: Ինչպէս երևում է, պարտնը մտադիր է տարածել իր թերթը ձրիապէս, յոյս ունենալով պահպանել նրա գոյութիւնը յայտարարութիւններով: Այդ տեսակ փորձ եղել է և թիֆլիսում, թերթը տեղի է մօտ մի տարի և այնուհետև խափանվել է, որովհետև յայտարարութիւնները այնքան բազմաթիւ չէին, որ պահպանել թերթը: Մենք Եւրոպայում, կամ Ամերիկայում չենք, որ այս տեսակ ձեռնարկութիւնները աջողվին, մենք Ասիայում ենք, որտեղ ոչինչ չէ աջողվում, որտեղ հասարակութեան մէջ տիրում է կատարեալ անտարբերութիւն դէպի ամեն բան: Մենք եղած լրագիրներին տեսնում ենք թէ մեզանում ամենեւին սովորութիւն չը կայ լրագիրներում յայտարարութիւններ տպագրել:

Շնորհակալութեամբ ստացանք Բազուի մէջ հրատարակված «Մի կաթիլ արիւն» վերնագրով գրքիկը, թարգմանութիւն Ս. Ամիրանցի: Գըր-ըյիլը արժէ 20 կոպէկ և վաճառվում է յօգուտ Շամախու հայ օրիորդաց ուսումնարանի: Տպւած է անցեալ 1885 թին, Ս. Տէր-Յովհաննէսեանցի տպարանում: Հրատարակիչը Սմբատ-բէկ Լաւա-յանցն է:

Վաղը, չորեքշաբթի, ամսիս 23-ին, նախկին Արծրունու թատրոնում պ. Սաֆրազեան և տ. Ալմա, մասնակցութիւն թուելով թատրոնի աւել բների, կը տան թուելու լեզուով մի ներկայացում: «Ֆաթալի-շահ», դրամա-կոմիդիա 3 գործողութեամբ, հեղինակու-թիւն Վ. Մադաթեանի և «Կըրմ-կըրմ», վոզ, մէկ գործողութեամբ, հեղ. Վ. Մադաթեանի: Սկիզբը 8 ժամին:

ԲԱՌՈՒՄԻ մեղ գրում են հետեւեալ: «Պետա-կան գոյքերի և ճանապարհային հաղորդակցու-թեան միջնորդների համաձայնութեամբ նախ-գործարանատէրերի պատգամաւորաց ժողովը իս-վանվում է, և սրա տեղ անդրկովկասեան երկա-թուղու վերաբնդի նախագահութեամբ կազմել

են «ժամանակաւոր ժողով», որի անդամները կը լինեն պետական գոյքերի նախարարութեան ներ-կայացուցիչը և երեք անդամ նախարարարանու-աէրերից: Այդ «ժողովին» յանձնված է, ա) մշա-կել և ներկայացնել երկաթուղու գործերի խորհրդ-արանին (Совѣту по желѣзнодорожным де-ламъ) նախկիններէ բաժանման կանոնադրու-թեան նախագիծը, և բ) մշակել գործարանատէ-րերի պատգամաւորաց ժողովի կազմակերպու-թիւնը, որին յիշեալ ժամանակաւոր ժողովից պի-տի անցնէ կառքերի բաժանելու պարտաւորու-թիւնը: Մինչև որ այդ մշակելի կանոնադրութիւ-նը կը վաւերացվի երկաթուղու գործերի խոր-հրդարանից, հրամանագրված է «ժամանակաւոր ժողովին» բաժանել կառքերը նախ ուղարկողնե-րի մէջ հետեւեալ կերպով: Նախ ժողովը պիտի որոշէ նախկին գործարաններին առաջիկայ տա-րուայ կարելի շահեստագործութիւնը, և ստանա-լով այդպէս կէրօսիին ընդհանուր քանակը, սրա-նից պիտի հանեն կասկեց ծովով ուղարկելի կե-րօսիներ, մնացած գումարը պիտի բաժանեն երկու մասի՝ խոշոր և մանր գործարանատէրերի վրա, բայց սակայն այնպէս, որ խոշոր գործարանատէ-րերի տարեկան շահեստագործութիւնը առնչու-թիւն ունենայ մանր գործարաններին շահեստագոր-ծութեան հետ, որպէս 3:1: Առձեռն նախկինա-լքեր կը բաժանվեն երեք մասի. երկու մասը կը ստանան խոշոր գործարանատէրերը, իսկ մէկ մա-սը մանր գործարանատէրերը:

Տեղական լրագիրներին հաղորդում են ԳԱՆ-ՁԱԿԻՅ որ այդ քաղաքում դիտարկութիւն կայ հիմնել «Փոխադարձ կրեդիտի» ընկերութիւնը:

Երկուշաբթի, ապրիլի 21-ին պ. Չէզիի և օրի-որդ Բարբի թիֆլիսի թատրոնում կայացած եր-կուրդ կոնցերտը կատարեալ յաղթութիւն էր եր-կու արտիստներին համար: Հասարակութեան ոգեո-րութեանը չափ ու սահման չը կար, ծափահա-րութիւններ, «բրաւօներ» և «բիսերի» վերջ չը կար թէ տաղանդաւոր պիանիստին և թէ չնոր-հալի երգչուհուն իւրաքանչիւր պիեսայից յետոյ անդադար դուրս էին կանչում: Օրիորդը ստացաւ երկու ծաղիկայ փունջ: Օրիորդը կրկնեց մի քա-նի կտորներ որ երգել էր առաջին կոնցերտում: Իսկ նրա երգած նոր կտորներէից մանաւանդ մեծ տպւորութիւն գործեց հասարակութեան վրա Շումանի «Widmung» բոմանքը: Պ. Չէզի անկց մանաւանդ մեծ աջողութեամբ Բեթովենի սոնա-տը, իր հեղինակած «Տարանտելլան» և Բոսիոյի «Մովսէս» օպերայից թաղերի փոխադրութիւնը: Նրկու տաղանդաւոր արտիստներ դնում են Բա-զու, այնտեղ էլ կոնցերտ տալու համար, իսկ վե-րադարձին դարձեալ տալու են թիֆլիսում մի կոնցերտ, չաքաթ օր, 26-ին ապրիլի:

«Մշակի» ներկայ համարը չը կարողացանք հրատարակել իր սովորական ժամանակին, երեք-շաբթի օրը, և սովորեցանք այդ համարը հրատա-րակել այսօր, չորեքշաբթի օրը:

ԱՐԳՈՒՅԻՆ գաւառից մեղ գրում են հետեւեա-լը: «Անցեալ մարտի 7-ին Օբքորակէրտի դիւղա-ցից խաչատուր Մարտիրոսեան և Վարդանէս Չա-վուշեան դէպի Ախալցխա գնացող Օբքորակէրտ-Մէրիս ասված ճանապարհի վրա, գիւղի մօտ մի ձորակում անցյալ չարագործներից գնտակահար սպանվեցան: Խաչատուրը կաճօ անուան տակ, ամենքին ծանօթ և սիրելի անձնաւորութիւն էր, որ վաճառականութեամբ էր պարսպում և հէնց այդ նպատակով էլ այդ օրը 2—3 հաղար թուրքի գապանում դրած գնում էր թիֆլիս, այդտեղից ապրանք բերելու: Ամենքը ցատում էին սպանվա-ծի վրա և միանգամայն դարձանում, որովհետև եթէ փողի պատճառով կատարված լինէր սպա-նութիւնը, սպանողները պէտք է փողեր վերց-նէին, իսկ թշնամիներ ունենալ խաչատուրը չէր կարող, ինչպէս վկայում էին ամենքը, քանի որ նա յայտնի էր իր աղէկ բնավորութեամբ: Իսկ միւս ընկերը մի խեղճ և աղքատ երիտասարդ էր, որ գնում էր փոքրիկ գիւղերը գերձակութիւն ա-նելու, իր տան համար պարտաւոր ձարելու: Համար: Մեր գաւառագետ պ. Կամսարական, սպանութեան լուրն իմանալով, անմիջապէս ձի է հեծնում և դնում է սպանութեան տեղը: Վէլ գիւղով անց-նելով, գաւառագետը հարուստ թուրք վաճառա-կան Մ-ի կողմը տան առջև կանգնում է և հրա-կայ գիւղերում բնակվող ժողովուրդը քննութեան ենթարկելու: Ետոյ, վերջապէս գտնվում են

սպանողների հետքերը և կալանաւորվում են սպանութեան մէջ կասկածված Սէֆէր և Բուշդի-թուրքերը, որոնք, ինչպէս լավում է, այս օրերս խոտտվանվել են իրանց յանցանքը:

«Тифлисска́й Листо́къ» լրագիրը հաղորդում է, որ ապրիլի 20-ին կայացաւ առևտրական բանկի ակցիոններին տարեկան ընդհանուր ժողովը: Վե-րաքննողական յանձնաժողովի գեկույումը կար-գալուց յետոյ խորհուրդը առաջարկեց հաստատե-լու բանկի 1885 թ-ի հաշիւները: Նրեցաւ, որ գումար արդիւնքը եղել է 138,140 ռ. 8 կ: Այն ար-դիւնքը կանոնադրութեան հիման վրա պէտք է բաժանել հետեւեալ կերպով: 50% պահուստի դրա-մազմէլին, 10% խորհրդի անդամներին, 10% հի-մնական դրամադրիւն մնացածից: Իսկ մնացածի 60% զիւլիւնէր, 20% բանկի հիմնադիրների օգ-տին, 10% բանկի վարչութեան օգտին, 10% բանկի ծառայողներին օգտին: Սակայն այդ որո-շումը ենթարկեց փոփոխութեան և վճարեց բայց պահեստի դրամայից մնացածը համարել բեղելով, որովհետև մի ֆիլիմայի մուգնայինը խորհրդի կողմից բողոքվեցան: Այս ընտրվեցան խորհրդի հինգ անդամներ երեք տարով՝ Մ. Շախարով, Ա. Բաբանասեանց, Գ. Թամաշեանց, Ս. Մերաբով և Եւանդուլով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆՍՏՐՈՒՆԴԱՐԻՍ

Աւստրո-Ունգարիայում անգլիկ շիթ թարգմա-րեց վերջին օրերում Գալիցիայի գիւղացիների շարժումը: Այդ մի ուշադրութեան արժանի և-րեղծ է գիւղական դատակարգի կեանքի մէջ: Գիւղացիների շարժումը սպասարկութեան կեր-պարանք է առել: Այդ տեսանք է գիւղացիների դէպի կալուածատէրերը ունեցած թշնամութեան, որը միշտ արտայայտվել է սկսած քառասունական թակաւններից:

Վիեննայի մի քանի անկախ լրագիրները հաղոր-դում են, որ այդ շարժումը առաջ է եկել այն բանից, որ վերջին ժամանակները գիւղացիների մէջ տարածվել են լուրեր իբր թէ նորից պիտի հաստատվի ճորտութիւնը:—Աւստրիական Գա-լիցիայի կալուածատէրերը շատ վատ են վարվում գիւղացիների հետ, և մի տեսակ ձգտում ունեն պահելու նրանց տղիտութեան մէջ: Գալիցիայի աղքատները դիմեցին փոխարքային և խնդրե-ցին ազդու միջոցներ ձեռք առնել խաղաղութիւնը վերականգնելու համար: Վերջին մանրամասնու-թիւնները այդ շարժման ցոյց են տալիս, որ լին և հրէայ կալուածատէրերը շատ հարստահարում են եղել գիւղացիներին: Մինչև անգամ պաշտօնա-կան տեղեկութիւնները հաստատում են որ ներ-կայ շարժումները հետեւեալ են այն նիթիւնի աղքատութեան և բարոյական ու մտաւոր ճնշման, որոնց ենթարկված են Գալիցիայի գիւղացիները: Աւստրիական բէխարատի վերջին հիտտերից մէկի ժամանակ լեհացի պատգամաւորները, որոնք շատ յուզված են կրակովից ստացված լուրերի պատ-ճառով, խնդրեցին ամենայն միջոցներ ձեռք առ-նել շարժումը միանգամայն ճնշելու համար: Այդ կողմնակի երկաթը արդէն մի գաղափար կարող է տալ թէ ինչ հիմք և ինչ պատճառ կայ ներ-կայ շարժման մէջ:

Տնտեսական տարաբնուի դրութիւն, աղքատու-թիւն ամենայն կողմից, հարստահարութիւն կալուա-ծատէրերի կողմից, կատարեալ տղիտութիւն, բա-րոյական մեղուութիւն,—սա այն պատկերը որը ներկայացնում է գիւղական դատակարգը, դարմա-նայի չէ որ այդպիսի դրութեան մէջ չըլլապատող հանգամանքների մի փոքրիկ փոփոխութիւն: Կա-րողանում է շարժում և սպասարկութիւն ա-ռաջ բերել ըստ. երկուսին քնած ժողովրդի մէջ: Անկախած աւստրիական կառավարութիւնը խեղադի միջոցներ ձեռք կառնէ վերջ տալու այդ շարժումներին, որոնք հիմք ոչ թէ սնտիա-պաշտութեան պատահական դէպքերի մէջն է, այլ տնտեսական և մտաւոր ծանրակշիւ պայման-ների մէջ, որոնք իրանց աղքատութիւնը ցոյց են տուել շատ տարիներ առաջ:

Վիեննայի «Wiener Abendpost» պաշտօնական թերթը գրում է. «Գալիցիայի գիւղացիների մէջ տեղի ունեցած շարժման պատճառը այն սնտիա-պաշտութիւնն է որ իբրեւ թէ 1886 թ-ին աշ-խարհի վերջը պիտի լինի, և նոյնպէս տարած-ված լուրը իբրեւ թէ նորից պիտի հաստատվի ճոր-տութիւնը:

տութիւնը, ինչպէս որ ուղեցել են համոզել ժող-վրդին գրողները: Կառավարութիւնը արդէն մարդիկ է ուղարկել շարժման կենտրոններում խաղաղութիւն հաստա-տելու համար: Մի քանի լրագիրներ այդ շարժում-ների և բանտերի վերջին շարժումների մէջ մի ներքին կապ են տեսնում:

ՆԱՄՍԿ ԹԻՒՐԻՍՏՆՈՅ

Կ. Պօլիս, 6 ապրիլի

Գարնանային այս աղուր օրերուն հետ, դա-ւարեաց այս անոյշ բուրումներուն հետ անգուլի հակադրութիւն մը կը կազմեն այն տխրազեցիկ պատկերներն, այն ժանտ հոտերն զորս մնջ կը նուրբ Ազգային Հիւանդանոցն: Մեծ պահել վերջի շաքաթ մեր սրտերն ընդհանրապէս շատ տրամադիր են դուր ռենհալու, և այդ առիթն օգուտ կը քաղեմք մի քանի բողոք մոռանելու հա-մար այն տխուր յարկին վրայ, որ հարկբարութիւն պահուցումներ, չարաչար կը առաւապին «Արեւելք» խմբագրութիւնը անցեալ շաքաթ խրկեց իւր ան-դամներէն մին Ազգային Հիւանդանոց որպէս զի ախանատես լինի նրա կապութեան և հաղորդէ մանրամասն տեղեկութիւններ Այդ տեղեկութիւն-ներն երէկ հրատարակուեցան «Արեւելք»-ի խմբա-գրականում մը, անօգուտ չենք համարեք հաղորդել մի քանի տեղեկութիւններ, հետեւելով այդ յօդուա-ծին:

Ազգային Հիւանդանոցն որ կը կոչուի Ս. Փրե-կի հիւանդանոց, կամ պարզապէս Փրկիչ, վայտէ չէնք մէ կառուցեալ Մարտիրոսի ծովուն ափանց վրայ: Գարուն թէ աշուն, ամառ թէ ձմեռ, ա-ռաւու թէ երեկոյ որ ժամանակին, որ ժամուն մանէք Փրկիչ դռներն ներս, անհնարին է սար-սուռ մը չը դգալ, անքան տխրաբոյր է, անքան մեղամաղձիկ է այդ վայրն: Այցելած եմ շատ հի-ւանդանոցներ, բայց ոչ մին թողած է իմ անքան տխուր և վշտահար տպաւորութիւն մը որքան Փրկիչ:

Փրկիչ կը պարունակէ հետեւեալ մասերն: Ա. Հիւանդանոց, բաժանեալ երկու յարկերու՝ արանց և կանանց: Այսօր կը գտնուին հիւանդա-րանն 150 հիւանդը, որոց 117 այր և 33 կին: Թա-ռաջ բերեմք «Արեւելք»-ի խօսքերն:

«Հիւանդարանի գիրքը բաղադրամբ Ս. Փրե-կեան շէնքին յարկերուն մեծամասնութեան հետ լաւագոյն է, քանի որ բարձր է: Աստ ևս դիտելի է որ ամէն մահճակալ գրաւուած է, և յարկերը ծածկուած են մահճակալներով, այնպէս որ խըն-դիւր մէ թէ հետզհետեւ կը չհիւանդեք ու պիտի դետեղուին որ վշտաւ չը լինի արդէն դարմանող հիւանդաց: Աստ ևս աչքը կը դարնէ շէնքի անբա-ւականութիւնն: Թղթախտաւորի մը, որ հազիւ եր-կու ամիս կեանք ունի, մահճակալին քով կայ ու-րիշ մահճակալ մը որոյ մէջն է ստամոքսի նեղու-թիւն ունեցող մը, և ասոր քովն է լուսնոտ մը կամ սրտի հիւանդութեամբ տառապող մը: Այս յարկերու միջոցով շատ կը տարբեր Քերայի եւրոպացոց հիւանդանոցներու միջոցովեան, վա-սըն դի մի նոյն յարկին մէջ բազմաթիւ հիւանդ-ներ դարմանուելուն պատճառաւ օրը միշտ աղա-կանեալ է, թէ և Էլեթի-Գուլէի դուրսի օդն ինքնին անհամար գերազանց է Թաքսիմի օդին:

Բ. ՅԻՄԱՐԱՆՈՅ, որ է նաև Ապուշանցն: Ա-րանց բաժնին մէջ կան 115 անձինք և կանանց բաժնին մէջ 47, գումար 162: Ասոր վիճակն ա-մենէն աւելի ողորմելի է: «Թերեւս ցամաքացու-թիւն չէ բնէ, կըսէ «Արեւելք» թէ՛ այսպիսի յար-կերու մէջ ընդ երկու մնալով մեղմէ շատերն ալ կրնան կորուսանել իրենց խելքը: Գետնայարկ խո-նաւ շէնքեր ուր աւելի բաւարի կը նմանին, քան առողջապահական շէնքերու, որոնք սահմանաւ են յիմարներ և տալուհներ յոգատուութիւն և ի մտա-յին բարեկարգութիւնն ածելու: Գետնից սալա-րկուած է աղիւտով և հրաւրանի արտադրած տա-քութիւնը չորայանքով բոլոր խոնավութիւնն, ո-րուն հետ կը խառնուի բոլոր դարչահատութիւնը, կատարեալապէս վնասակար միջոցորտ մը կը ձե-ւացնէ բոլոր այս յարկաց մէջ:

Գ. ԱՆԿԵԼԱՆՈՅ, որ են ծերեր, պառւաններ, աղքատներ, ամէնքն 116, որոց 46-ը ծեր են 70 պառւաններ: Ասորն անկալաւարն ալ յոյժ անյար-մար է, այս յարկեր այնպիսի ցած են որ քիչ լոյս և աւելի քիչ օդ կը ստանան:

Դ. ՈՐԲԱՆՈՅ, որ կը պարունակէ 259 աշա-կերտ—ամէնքն ալ մեր սեւին կը պատկանին, որը աղջիկները մոռցուած են: Որբանոցն երեք մասե-

րու կը բաժանուի. 1-ն ծաղկոյց, որ կը պարունակէ 65 որբ. նախալրժարան 96, ուսումնարան 98: «Յաւ ի սիրա տեսնուեցաւ, կըսէ «Արեւը» որ տղայոց թիւն աւելի էր մասնակալներու թիւէն: Նշարանաց մէջ տեղ չէ մնացած նոր մասնակալներ զնելու համար, և շատ մը տղայք զոյգ զոյգ կը ննջեն մի և նոյն անկողնոյ մէջ, կամ երկու մասնակալք իրար կը կցուին: միանգամայն երեք տղայոց ծառայելու համար: Ար որ մասնակալի տեղ չը կայ անկողնիները գետնին ձգուած են, և արայնու հանդերձ ցաւալի հարկ մը ծագած է: մինչև անգամ եղբայր կամ քույրական չեղող երկու կամ երեք տղայք մի և նոյն վերակին տակ պատարարելու գիշերը: Նշարանաց մէջ զիշերն յոյժ շնորհակար գարշահոտութիւն մը կը տիրէ, արդիւնք՝ ննջողաց բազմութեան և չնընդհատ անկողնութեան, հետեւեալ և ընդհանուր անյարմարութեան: Հակառակ այս յոյժ անհաստ պայմանաց այդ 259 տղայք չեն երեխայնայնայն հիւանդ կամ տկար որդիսի կարելի էր վախճալ, և այս առաւելութիւնը վերաբերել է անշուշտ Հիւանդանոցի օդին, ջրոյն ու դիւրին: Ինչպէս կը տեսնուի այս համառօտ տեղեկութիւններէն Գրիգորի հիւանդանոցն կը պարունակէ 687 թշուառներ, որք արդարեւ թշուառ են որ այդպիսի յարկի մը ներքեւ կը գտնուին: Ազգ. Հիւանդանոցը կէս դար է հաստատուած է, և թուրքոյ մէջ առաջին անգամ հաստատուած է, և սակայն թուրքոյ հայք որ այդ կէս դարուն մէջ փճացուցած են այնքան հարստութիւններ, կարող չեն եղած կառուցանել կանոնաւոր շէնք մը և պատրաստել հիւանդանոցի համար եկամուտներու ապահով աղբիւրներ: Այժմ մարդասէր օգնիչներ կը հետամտին լրացնել այդ պակասն. ասոնց պարագային են պարոնաք Յակոբեան Միքայէլ և Յովհաննէս եղբայրք, որք Պոլսոյ առաջնակարգ վաճառականներէն են: Յակոբեան եղբայրք մօտաւորապէս 30,000 ռուպլի պիտի նուիրեն ի նպատակ նոր հիւանդանոցի մը կառուցման: Կարեւոր գուժար մ'ալ պիտի նուիրեն, անշուշտ, Կիւլպէնկեանը, իսկուրի պ. Սպարթակեան պիտի նուիրէ 40,000 ռ. և ասոնց կը մասնակցին անտարակոյտ ուրիշ վաճառականք և կը հաւաքեն 200,000 ռուպլի գումարն որով կարելի պիտի լինի շինել նոր շէնք մը, համապատասխանող առողջապահական ամէն պայմանաց: Առ այժմ կը կարծուի թէ այս տարի ամառը կարելի պիտի լինի ձեռնարկել նոր հիւանդանոցը շինութեան: Այս եղանակով, հակառակ դրամական տագնապին, բարեգործական հով մը կը լիւնէ: Կաւարտի Սամաթիոյ եկեղեցոյ շինութիւնը, որոյ համար յոյժ կարեւոր գումար մը նուիրած են նոյն պ. Յակոբեան եղբայրք: Ի նպատակ Երուսաղէմի հաւաքումներն սկսան և կը շարունակուին: Սպարթակեան հոյակապ դպրոց մը կառուցանելու կըստի իսկուրի և Պոլսոյ Կենտրոնական վարժարանի համար աշխատութիւնները կը շարունակուին: Ամէն կողմանէ ոչ միայն գործունէ փափազ մը, այլ նաեւ կը գործեն: Եւ սակայն այդ գործունէութիւնը, այդ հոգեղութիւններն որքան ուրախութիւն կը պատճառեն, այնքան ալ տրտմութիւն կազդեն զէ՛ք մեզ նման մարածողներուն: Արդարեւ քիչ անց չը մտածենք թէ այդ ամէն աշխատութիւններն օտար հողի վրայ կը կատարուին և ոչ ոք կը մտածէ նոյն իսկ հայրենիի հողին թող Սպարթակեան, Յակոբեան և այլք սպասեն մեծամեծ գումարներ, թուրքոյ մէջ եկեղեցիներու և դպրոցներու կառուցման համար, սակայն եթէ այդ գումարներէն փոքրիկ մասն մ'ալ յատկացնուին թրքա-Հայաստանի համար, արդեօք ազգին յառաջադիմութեան համար աւելի արդիւնաւոր պիտի չը լինէն այդ փոքրիկ փշաքնններն, քան այն մեծ գումարներն ոչ իսկուրի և Պոլսոյ համար կը սպասուին: Ահա Միքայէլ Ընկերութիւնը, քիչու համար օգնութեան ձեռք չը կարկառել անոնց: Բայց Հայերը հաստատաւորութեան արձանգի թիւերէն են, միշտ այսպէս եղած են. անգամ մը հեռու հայրենի հողէն այլ ևս կը մոռնան զայն և բոլոր իրենց ջանքերն կը թափեն օտար հողի վրայ: Մեծ գաղափարներ, ապագայի խորհուրդներ մտաք չեն գտներ հարուստներու մօտաց մէջ: Այդ գաղափարով աղօղորուած են, կարծես ամէն Հայք: Եւ անցեալ շաբաթի նոյնին մէջ Ազգ. Ժողովը նկատողութեան կ'առնու երեսփոխանի մը առաջարկն որով նա իրաւոր որ Ժողովը յանուն ազգին, չը նորհակալութեան քուէ տայ իշմիրի պ. Սպարթակեանը: Ի հարկէ ամէն Ժողովականք քուէն պիտի տան, միայն թէ կը փափաղեն որ Պատրիարքին և Ազգ. վարչութեան կողմանէ մասնաւորապէս հարգուի առ Ազգ. Ժողովը դպրոցի կա-

ռուցումն: Չը մոռնանք ըսել թէ Ազգ. վարչութիւնը կը փափաղի որ պ. Սպարթակեանի անունը և Միքայէլի կ'աւելուի անունը միասին չընթանան: Այն երեսփոխանն որ պ. Սպարթակեանի համար առաջարկեց չորհակալութեան քուէ, նոյն երեսփոխանն չորհակալութեան կառաջարկէր նաեւ Միքայէլի կ'աւելուի անունը: Ինչ և է մեր խնդրէն չը չեղնէ. ուրեմն ըսինք որ Ազգ. Ժողովը չորհակալութեան քուէ պիտի տայ պ. Սպարթակեանին որ իսկուրի մէջ դպրոց մը կը կառուցանէ, բայց այդ Ազգ. Ժողովը քիչու չը մոռնալ երեք հրապարակաւ յայտնել ազգին չորհակալութիւնն առ պ. Սամառարեանը: Կ'երեւի թէ պ. Սամառարեանը խտորմունք մը ըլլաւ ընդհանուր կանոնին և փոխանակ օտար հողի մը վրայ իւր դպրոցն հիմնելու հիմնեց զայն բուն իսկ Յաւկա-Հայաստանի մէջ, միակ իմաստուն և օգտակար միջոց ազգին ծառայելու, հետեւեալ թուրքոյ Հայոց Ազգ. Ժողովը յարմար չը դատէր նորա չորհակալութիւնն յայտնելու: Ինչ որ ալ ըլլաւ Ազգ. Ժողովը կարծիքներն, մենք մաղթենք որ աւելի պ. Սամառարեան օրինակ հանդիսանայ զայն, թէ այլք: Հայկակ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Հիւսիսային գործակալութիւնը հեռագրում է Գարեգին որ Յունաստանը պետութիւններ կողմից ուղարկած վերջնագրին իր տուած պատասխանում յայտնում է, որ ինքն թողնելու չէ դրօշակի տակ զօրքի ներկայ կազմակերպութիւնը, այլ ձեռնամուխ կը լինի զօրքի թէ և հետագային սահմանափակելուն, այնքան ժամանակամիջոցով, որքան որ այդ գործողութիւնը կը պահանջի: — «НОВОЕ ВРЕМЯ» լրագրին հեռագրում են որ Բ. Դրան դէպի Յունաստանը անորոշ դիրք բռնելը բացառուելու է նրանով որ Կ. Պոլսում ստացված են լուրեր, իբր թէ Թուրքիայի տարական նահանգներումն էլ յազմունքներ են սկսվել: — Ամերիկական իրաւագիտների կողմից անգաղար յարուցվող և դեռ երկարելի յազմունքներն առաջն առնելու նպատակով Ամերիկական կառավարութիւնը դիտարկութիւն ունի շատացնել իր հիւպատոսների թիւը Միացեալ-Նահանգներում: — Լոսանջիլոսը այն միտքն են յայտնում, որ Մեքսիկայում Բիստիլի միլիտարական կազմակերպության գլխավոր պատճառը Բիստիլի ֆինանսական քաղաքականութիւնն էր: — Բէյրութի գործակալութիւնը հաղորդում է լրագրներին, որ թիւրքաց հոգեւոր կառավարութեան և Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի մէջ ծագել են տարաձայնութիւններ Երուսաղէմում գտնվող մի քանի կաթոլիկների մասին: Այդ խնդիրը վրա Կ. Պոլսի հայերը առանձին ուղարկուած են զարմանք և ցնցումներով: Ինչ որ ալ ըլլաւ, այլ նոյն իսկ օտար պետութիւններին միջնորդութեանը: — Խաղաղութիւն և այդ երկրին հարեան երկիրներում, ինչպէս հաղորդում են լրագրները, ձեռք են առնված ամենամահաբեկ միջոցները խօսքայի տարածման առաջն առնելու համար: — Հիւսիսային գործակալութիւնը հեռագրում է մեզ որ թիւրքաց արտաքին գեղապան Լեյքեն-փաշան, որ եկած էր Կիւրթ, Թագաւոր Կայսրին ներկայանալու համար, նորից ճանապարհ ընկաւ թիւրքաց մայրաքաղաքը վերադառնալու համար: — Աթէնքը մեզ հեռագրում են որ յոնաց կառավարութիւնը շարունակում է յայտնել որ թէ և պետութիւնների պահանջներին անպայման են թարկվել չէ կարող, բայց այնու ամենայնիւ փոքր առ փոքր յանձն է առնում զինաթափվելու: Արդէն պահանջի զօրքերի երկու դասակարգերը արձակված են Աթէնքի բերդապահ զօրքին դէպի սահմանագիծ խուզողներու հրամանը յետ է առնված: Չորս հատ նաւեր, որոնք պէտք է երթնեկութիւն անէին Յունաստանի ծովերում, զինաթափ են լինում: ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Դոկտոր Պալլա գտաւ մարտի 31-ին նոր մոլորակ:

Բրիտանական զօրք* զլրատու հրամանատարը, զորքս Կեմբրիջեան, համոզված լինելով որ անգ-

լիացիները համար առանձնապէս հեռու երկիրներում պատերազմներ ունենալը անհրաժեշտ մի պահանջ է, առաջարկում է հեռու երկիրներ պատերազմ գնացող սպանների կ'անանց համար հիմնել մեծ և ընդհանուր բնակարաններ: Դրոյ մշակած նախագիծով, այդպիսով սպանների կանայքը կարող պիտի լինեն ապահով կերպով ապրել իրանց ամուսինների պատերազմ գնացած ժամանակը, իսկ սպայ-ամուսինները առաջին կը լինեն, գիտեանալով, որ իրանց կանայք ապահով և անվտանգ գրութեան մէջ են: Զարմանալ չէ, ի հարկէ, որ Կեմբրիջի դոկտոր, իբրեւ զինարական, ուղղում է կ'անանց կազարմաներ էլ ունենալ: * * * Խաղաղութիւն խօսքան սատականում է, բայց, բարեբաղդաբար, ոչ թէ մարքէանց, այլ ընտանի կենդանիների մէջ: Կոնէօի մօտերում խօսքայից կոտորում են կատուներ, Կարալօի մէջ խօսքան կոտորում է հաւերին և բաղերին: Բժշկական գնութիւնները ցոյց են տալիս, որ այդ խօսքան համարեա նոյն յատկութիւններն ունի, ինչ որ ունի մարդկանց մէջ տարածվող խօսքան: * * * Կոնս Լ. Ն. Տօլստոյի «Անա Կարենին» վիպասանութեան թարգմանութիւնը նորերումն լոյս տեսաւ Նիւ-Եորքում, անգլիերէն լեզուով: * * * Կարենին յայտնի կրիտիկոս, Գեորգ Բրանդէս, որը մի քանի ժամանակ առաջ արտոյած էր իր հայրենիքից, իր վերին ատոմանի ազատամիտ գաղափարների համար, թարգմանել է ռուսաց յայտնի գրող Լ. Ն. Տօլստոյի «Պատերազմ և փաղաղութիւն» գրվածքը, որ շուտով կը տպագրվի: Տօլստոյի մասին մի մեծ կրիտիկայն են միասին: Ռուսաց գրականութիւնը անհամբեր սպասում է Բրանդէսի կրիտիկային, քանի որ ներկայումս Տօլստոյի բարոյական-կրօնական գաղափարները մեծ ազդու են յարուցանում Ռուսաստանում և շատերը նրա արտայայտած մտքերի դէմ մաքառում են: * * * Կուրմանդեան նահանգից գրում են «НОВОСТИ» լրագրին, որ խմբիչների գործերի գաւառական վարչութիւնը նորերումն ստացաւ մի գլուխ 25 կանանց կողմից հաւաքական խնդրագիր, որով խնդրում են իրաւունք չը տալ գլուխ գինեւորան բանալու, որովհետեւ իրանց ամուսինները վաճառում են անարդար զանգեղ վերջին շապիկը և վատնում են տան մէջ բոլոր եղածը գինեւորներում: * * * Լոնդոնի արեւելեան կողմում ապրող բանուորների համար դիտարկութիւն կայ շինել այսպէս կոչված, մի «Ժողովրդական պալատ», որտեղ կը գտնուին տեխնիկական ուսումնարաններ, գրադարաններ, ընթերցարաններ, ծանոթային այգիներ, կենցեղապիսի դասընթաց, դրամարաններ, մարզադահլիւններ և այլն: Տեխնիկական ուսումնարանները պիտի շինվեն քսան հազար երկու երեքսոց համար: Հարկաւոր գումարի մեծ մասը արդէն հաւաքված է: «Ժողովրդական պալատ» խամամակաւ համարվում է Վիկտորիա թագուհին: * * * Պետերբուրգի բժշկական ընկերութեան նիստի մէջ բժիշկները մէկը կարողացան նորերումն մի գեղեցիկ «Պոչուր մարդկանց» մասին: Զնկուցանողը առիթ էր ունեցել տեսնելու մի հիւանդ կին, որը ունէր մազով ծածկված մի պոչ 45 միլիմետր երկարութեամբ, և որը իսկապէս նրա հիւանդութեան պատճառն էր: Հիւանդը բացառութեամբ երեանց է, որ այդ երեւոյթը յատուկ է եղել ժամանաբար իրանց ընտանիքի կին-անդամներին: Հարկաւոր են համարում աւելացնել, որ զինականներ առանձնապէս Կարմիր թէթովայի տեսակէտից այդ երկու թնցաւորի է համարում: * * * Լիֆլանդիայի նահանգում Գոմելի քաղաքային այգում, մարտի 30-ին առաւօտեան ժամը 6-ին գտան մահաւոր ուսուցիչ Տի դիակը: Տիֆլիսի քաղաքային կոնստանտին էր գործել. նա 28 տարեկան էր: Դիակը մօտ ընկած էր ատրճանակը: Արիւնով շարժված էին չորս կողմի հողը, ծառերը և նստարանը: Նստարանը վրա գտնվեցաւ մի թուղթ հետեւալ բովանդակութեամբ. «Տաւ տարի է ես սովորեցնում եմ մատաղ սերնդին գրել-կարդալ: Վաճառականութեան վատ գրութիւնը ազդեց և իմ գործերի վրա: Իմ դասերը պակասեցին: Ես այժմ

աղքատ եմ: Վերջին ժամանակները ես կերակրելու եմ օրով: Գլուխ ցաւում է: Ստամոքսս խանգարված է: Ոտներս հրաժարվում են ծառայելուց: Մայրս հիւանդ է: Հայրս պաշտօն չունի: Քոյրս տանջվում է մարդու ձեռքին: Եղբայրներս ողորմելի դրութեան մէջ են: Ազգային վրա յոյս չունեմ: Ես կին և երեխայք չունեմ և ոչ ոք չի անիծի ինձ:» * * * ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՅՑ

ԱՅԷՆԻ, 19 ապրիլի: Կեմբրիջի Փրանսիական գեղապանի հետ խօսակցութեան մէջ յայտնեց որ Յունաստանը շատ շուտով զինաթափ կը լինի և հէնց որ այժման բարդ հանգամանքներին վերջ կը դրվի, տէրութիւնը փոքր առ փոքր ձեռնամուխ կը լինի պահեստի զօրքի արձակելուն: Բայց ուրիշ կողմից լսվում է որ եթէ պետութիւնները կը պնդեն իրանց վերջնագրի մէջ յայտնված պահանջների վրա, այն ժամանակ Յունաստանը չի զինաթափվի և ինքն կառաջարկի պետութիւններին գործադրել բուն միջոցներ: Օտար պետութիւնների պատերազմական նաւերը արդէն պատրաստ են լողալու և զինուորներին խափաւ արգելված է ափի վրա իջնել: ՍՅՅԻՍ, 19 ապրիլի: Խխանը երկարացրեց իր ճանապարհորդութիւնը նոր նահանգներում: Գաւառ մի բաց նամակի մէջ առաջարկում է իր քաղաքական համամիտներին կազմել միասնական, իշխանի վերաբերմամբ միմիայնութեան կողմից բռնած ընթացքի դէմ բողոքելու նպատակով: ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 ապրիլի: Երեկ գիտութիւնների ակադեմիան հանդիսաւոր նիստի մէջ յարգեց ռուսաց առաջին պատմաբանի, հանգուցեալ Տատիչիլի յիշատակը, նրա ծննդեան երկու հազար ամեայ տարեդարձի առիթով: Բազմաթիւ հասարակութիւն ներկայ էր: Պատուաւոր հիւրերի թիւում կային Մեծ Խխանի Կոնստանտին Կոնստանտինովիչ, հաղորդակցութեան ճանապարհների միմիայնորը և ազգային լուսաւորութեան միմիայնորը օգնականը: Ակադեմիկոս Պապով ճառ խօսեց Տատիչիլի նշանակութեան մասին, որպէս պատմականի իսկ ակադեմիկոս Բեդրազով նուիրեց իր ատենախօսութիւնը Տատիչիլի, որպէս հանրային գործի Ռուսաստանում կազմակերպողի գործունէութեան լուսաբանելուն: Պաշտօնապէս հեռագրվում է Եւստայից, որ երեկ բուսական պատերազմական միմիայն, գնեւորը Ամերիկական ընդունվեցաւ Թագաւոր Կայսրից և ներկայացրեց Նորին Մեծութեանը բուսական թագաւորի ինքնագիր նամակը: Այնուհետեւ գեղապան ընդունվեցաւ Թագուհի Կայսրուհուց: Երեկոյեան գնեւորը Ամերիկական իր սվիտայի անձնիքներով հրապրիցաւ Բարձրագոյն ճաշկերպի: «Journal de St. Pétersbourg», խօսելով Կեմբրիջի կողմից թէ և զգուշաւոր կերպով յայտնած պատրաստակաւութեան մասին զինաթափվելու, նկատում է, որ Եւրոպան անկասկած նկատի կառնի այդ անհրաժեշտ զգուշութիւնը, բայց պիտի պահանջվի, որ զինաթափվելու համար նշանակելի ժամանակամիջոցներ լինեն որոշի և ոչ թէ Աթէնքի կազմակերպ: Զինաթափվել պէտք է կատարվի Յունաստանի պատերազմական ձգտումներից Եւրոպային ապագայումն էլ ապահովող պայմաններով, որոնց հիման վրա Թուրքիան էլ կարողանայ սահմանափակել իր զօրքի թիւը: ԱՅԷՆԻ, 20 ապրիլի: Հինգ պետութիւնների ներկայացուցիչները գումարվեցան երեկ երեկոյեան որպէս զինաթափ հաղորդեն իրանց կառավարութիւններից ստացած հրահանգները: Հաստատ են համարում որ Ռուսաստանի և Խաղաղի ներկայացուցիչները խաղաղաւէր հրահանգներ են ստացել, այն ինչ մնացած երեք պետութիւններից ներկայացուցիչները հրամանագրված է պնդել վերջնագրի պայմանների կատարման վրա: Ամենքը համոզված են որ Կեմբրիջի այլ ևս նոր զինաթափ անելու չէ, ենթադրելով որ հրաժարաւոր իրաւունքների խախտելուն: Այստեղ նախագրուած են թէ ինչ անպայման դիտարկութիւններ կը ծագեն այնպիսի միմիայնութիւն կազմակերպելու համար, որ համաձայնվել ձեռք առնել կառավարութեան զեկը հինգ պետութիւններից պահանջած պայմաններով: Գործերի գրութիւնը այդպիսով բարդվում է: ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 ապրիլի: Երեկ Ալեքսանդրին-

